անուան է կառուցել, զնորա պատկերն ինձ ցոյց տը-
ւէք՝ և միաբանքն ցոյց կուտան սրբոյն Յակոբայ Տե-
առնեղբօրն՝ և Գլխադիրն որդւոյն Զեբեթեայ և Մա-
կար ճգնաւորին. իսկոյն ճանաչէր թագաւորն թէ սո-
քա էին որ առաջի իմ զգեստիւք և մոմեղինօք գա-
յին, և ամենեքեան փառս ետուն Աստուծոյ և սրբոց
նորա, և թագաւորն գրեալ նոմոս ի վերայ քարի եւ
եդեալ ճակատ դրսի դրանն, ևս նպղեթլեմեմ թէ ոչ
ոք չի հակառակի սորա, Հայոց ազգէն մինչեւ մէկ
պառաւ կին մնայ նէ նորա լիցի, եւ հակառակ սորին
ամօթալից յետս չոգան եւ խայտառակեցան» (Բազ.
1867, էջ 202–203)։

4. Մարիամանց կամ Իւղաբերից եկեղեցիին ա-
ւանդութիւնը. — Մարիամանց կամ Իւղաբերից եկե-
ղեցիի մասին պատմութենէն բան մը չենք գիտեր,
բայց ըստ աւանդութեան՝ Սիոնի ճանապարհին վրայ
Դաւիթի բերդին դիմաց՝ Հայոց Ս. Յակոբեանց վան-
քին խիստ մօտ սրբավայր մը կար յանուն Իւղաբե-
րից, ուր հաւատացեալներ և ուխտաւորներ դարերով
գունդագունդ դիմած են ու յիշատակած Խնկաբեր կա-
նանց աստուածահաճոյ գործը։ Որքան որ նոյն սրբա-
վայրը ժամանակի բերումով շատ կանուխէն ձեւափո-
խութիւն ունեցած է և դադրած նպատակին ծառա-
յելէ, բայց և այնպէս ճարտարապետական քննութիւն-
ներն ու քրիստոնէական հնախօսութիւնը, ինչպէս
նաև վաղեմի ուխտաւորաց ուղեգրութիւնները շատ
ստոյգ կերպով կը հաստատեն թէ մատնանշուած սըր-
բավայրը եղած է Մարիամանց տունը և հոն ի հնումն
շինուած է եկեղեցի մը՝ յանուն Ս. Իւղաբեր կանանց։

Իւղաբեր կանանց գլխաւորն էր Մարիամ Մագ-